ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո հոյ հեղկոմը կենսագործեց Ռուսաստանում արդեն փորձության ենթարկված տնտեսական քաղաքականությունը։ Դա «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն էր, որը մեխանիկորեն մտցվեց՝ առանց հաշվի առնելու բնակչության սոցիալ-տնտեսական ծանր վիճակը։ Ավերված ու կողոպտված, գաղթականներով ու որբերով հեղեղված մի երկրում, որտեղ սովն ու համաճարակային հիվանդություններն առատ հունձ էին անում, «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը չէր կարող որոշակի դրական արդյունք տալ։ Ավելին, ճնշումներն ու վերջին պաշարների բռնագրավումները վերջնականապես հիասթափեցրին ղյուղացիությանը, որը 1921 թ. փետրվարին զենքով պայքարի ելավ իշխանությունների դեմ՝ իր իրավունքները պաշտպանելու համար։ Հետագայում բոլշևիկները խոստովանեցին, որ առանց անհրաժեշտ նախադրյալների կոմունիստական բաշխման անցնելու այդ փորձերը կոպիտ սխալ էին և մեծ վնաս հասցրին տնտեսությանը։

«Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից մեծ վնաս կրեց նաև կոոպերացիան, որը հանրապետությունում բավական թույլ էր տարածված, գրեթե քայքայված էր և չէր կարողանում կատարել մանրարտադրողներին համախմբելու, նրանց արտադրական և սոցիալական վիճակը բարելավելու իր դերը։ Քանի որ «ռազմական կոմունիզմի» հետևանքով պետականացվեցին մանր ու միջին ձեռնարկությունները և արգելվեց առևտուրը, հատուկ դեկրետով պետականացվեց նաև կոոպերացիան, կցվեց պարենային ժողկոմին և դարձավ որոշ մթերքներ բաշխող տեխնիկական ապարատ։ Անմիջական կոմունիստական բաշխման հարաբերություններին անցնելու արկածախնդրական քաղաքականության պայմաններում կոոպերացիան, դառնալով պետական ապարատի կցորդ, դադարեց գոյություն ունենալուց։

Սակայն բռնությունների վրա հենվող այդ քաղաքականությունը երկար չտևեց։ Քաղաքացիական կռիվներից հետո փոխվեցին տնտեսական քաղաքականությունը և սոցիալիստական շինարարության տեսությունը։ Եթե մինչ այդ ամեն ինչ հանգեցվում էր Կարմիր բանակի հաղթարշավներին և ապրանքափոխանակության պարզունակ գործընթացին, ապա նոր տնտեսական քաղաքականությանը (ՆԷՊ) անցնելով՝ առաջին պլան մղվեցին մասնավոր ձեռներեցությունը, առևտուրը և ապրանքադրամային հարաբերությունները։ ՆԷՊ-ը կտրուկ շրջադարձ է խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության մեջ։ Արմատապես փոխվեցին պետության ու գյուղացիության և ընդհանրապես մանր ու միջին ձեռնարկատերերի հարաբերությունները։ ՆԷՊ-ին անցնելը միաժամանակ վկայեց, որ վարչարարական մեթոդներով տնտեսության արագ վերակառուցման փորձերն իրենց չեն արդարացնում, և անցման շրջանի քաղաքականությունը պետք է հենվի համոզելու, բազմակարծության և տարբեր կացութաձևերի խաղաղ մրցության վրա։ Հատուկ ուշադրություն դարձվեց նաև կոոպերացիային, փոխվեց վերաբերմունքը դրա նկատմամբ։ Պատահական չէ, որ չնայած կուսակցության X համագումարում չէր նախատեսվում քննարկել կոոպերացիայի հարցը, պարենահարկին անցնելու մասին որոշում ընդունելուց հետո հատուկ որոշում ընդունվեց նաև կոոպերացիայի մասին։ Այնտեղ իրավացիորեն նշվում էր, որ ՆԷՊ-ի պայմաններում կոոպերացիան միակ տնտեսական կազմակերպու-

թյունն է, որը կարող է միավորել մանրարտադրողներին, նպաստել նրանց արտադրական և սպասարկման հարցերի կարգավորմանը։

Խորհրդային շրջանի գրականության մեջ մեծ դեր է հատկացվում լենինյան կոոպերատիվ պլանին, և բանն այնպես է ներկայացվում, թե իբր առաջին անգամ է հայտնագործվում կոոպերացիան տնտեսական շինարարության մեջ օգտագործելու արդյունավետության գաղափարը։ Կոոպերացիայի օգտավետությունը վաղուց էր հայտնի, այն հաստատվել է շատ երկրների փորձով։ Կոոպերացիան մեծ դեր է խաղացել աշխատավորական զանգվածներին շահագործումից պաշտպանելու, նրանց սոցիալական վիճակը բարելավելու գործում։ Անմիջապես ծառայելով իր անդամների շահերին, կոոպերացիան միաժամանակ նպաստում է ամբողջ հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացմանը։ Լենինյան կոոպերատիվ պլանով կոոպերացիայի ամբողջ գործունեությունը դրվում է կուսակցական և պետական խիստ վերահսկողության տակ, որով փաստորեն ավելի շատ քաղաքական հարցերի լուծման միջոց է դառնում, քան տնտեսական։ Կոոպերացիայի այդ քաղաքականացումը ավելի շատ վնասում է դրա գործունեությանը, քան նպաստում։ Կոոպերացիայի արդյունավետ գործունեությունը առաջին հերթին պայմանավորված է նրա ինքնուրույնությամբ և անդամության կամավորությամբ։ Այս պայմանների անտեսումը կարող է կործանարար լինել նրա համար։

1921 թ. անցնելով ՆԷՊ-ին՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը հասկացավ, որ ճգնաժամից դուրս գալու և բնակչության տարրական պահանջները բավարարելու հիմնական ուղին ավերված տնտեսության վերականգնումն է՝ ներքին միջոցների արդյունավետ օգտագործման և ապրանքագրամային հարաբերությունների ծավալման միջոցով։ Այս խնդրում կարևոր դեր էր հատկացվում պետական և կոոպերատիվ առևտրին։ Պետական առևտուրն այդ շրջանում կենտրոնացված էր պարենժողկոմատում և հիմնականում սահմանափակվում էր քարտերով ապրանքներ բաշխելով։ 1921 թ. հանրապետությունում գործող մի քանի պետական հանրախանութների բազայի վրա 1922 թ. սեպտեմբերին ձևավորվեց Հայպետառը, որի դրամաշրջանառությունը բավական նվազ էր՝ անհրաժեշտ ապրանքներ չլինելու պատճառով։ Ապրանքաշրջանառության բնագավառում կարևոր տեղ էր տրվում հատկապես կոոպերատիվ առևտրին։ ՀԽՍՀ ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 3-ի որոշմամբ Հայկոոպը, որի մեջ միավորված էին Սպառկոոպերացիան և Գյուղատնտեսական կոոպերացիան, անջատվեց պարենժողկոմատից և ինքնուրույն գործունեության իրավունք ստացավ։ Սակայն Խորհրդային Հայաստանի կառավարությունը կոոպերացիայի հարցերով լուրջ զբաղվեց միայն քաղաքացիական կռիվներից հետո։

1921 թ. աշնանը որոշում ընդունվեց կոոպերացիայի բոլոր ձևերը՝ սպառողական, գյուղատնտեսական և արդյունաբերական, միավորել մեկ միասնական կոոպերացիայի մեջ։ Հանրապետության բոլոր ձեռնարկություններին հանձնարարվում էր պատվերներ տալ և մատակարարման պայմանագրեր կնքել առաջին հերթին Հայկոոպի հետ, որը ճիշտ է, դանդաղ, բայց հետևողաբար բարելավում էր իր ցանցը, ծավալում շահավետ գործունեություն։ Սակայն աշխատանքները դեռևս բավարար չէին։

1923 թ. մայիսին Երևանում գումարվեց Հայաստանի կոոպերատիվների առաջին համագումարը, որով նոր թափ հաղորդվեց կոոպերատորների շարժմանը։ Այդ շրջանում փաստորեն ավարտվեցին կոոպերացիայի վերակառուցման աշխատանքները՝ ՆԷՊ-ի պահանջներին համապատասխան։ Հայկոոպը սկսեց ավելի շատ օգնություն ստանալ պետությունից՝ վարկ, հումք, շենքեր և այլն։ Շուտով Հայկոոպը իր բաժանմունքները բացեց տարբեր գավառներում (Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա, Լոռի-Փամբակ, Էջմիածին և այլն)՝ վճռական գործունեություն ծավալելով մասնավոր առևտրի և մանր, անհատական արտադրողներ հետ մրցակցելու համար։ Ուշագրավ է, որ ՆԷՊ-ին անցնելուց հետո Հայկոոպը ինքնուրույն գործելու հնարավորություն

ստացավ նաև արտաքին առևտրի բնագավառում, որը, սակայն, էական արդյունք չտվեց։

1920-ական թվականների կեսերին Հայաստանի բոլոր գավառներն ընդգրկվել էին տարբեր տեսակի կոոպերատիվ կազմակերպությունների մեջ, որոնք աստիճանաբար ընդլայնում էին իրենց գործունեությունը։ Կոոպերատիվները առևտրի ասպարեզից հաջողությամբ դուրս էին մղում մասնավորին և շահեկանորեն դառնում գյուղի և քաղաքի միջև կապի հիմնական օղակ։ Եթե 1923—1924 թթ. կոոպերատիվ առևտուրը կազմում էր ընդհանուրի մոտ 22 %-ը, ապա 1926—1927 թթ. հասավ 61 %-ի[1]։

Սակայն Հայկոոպը միայն առևտրական գործունեությամբ չէր զբաղվում։ Այն միավորում էր նաև մանրարտադրողների շատ ջոկատներ, որոնց արտադրանքը թույլ զարգացած արդյունաբերության պայմաններում բավական մեծ նշանակություն ուներ։ Տարբեր կոոպերատիվներում ընդգրկված էին մի քանի հարյուր ձեռնարկություններ։ 1928 թ. բանվորական կոոպերացիաները (բանկոոպներ) ունեին 45 ձեռնարկություն, որտեղ աշխատում էին 9 հազարից ավելի մարդ, խառը կոոպերատիվները՝ 3—6 ձեռնարկություն, շուրջ 6 հազար, գյուղկոոպները՝ 173 ձեռնարկություն, ավելի քան 30 հազար աշխատողներով։ Սա մանր արտադրողների մի խոշոր բանակ էր, որի արտադրանքը հիմնականում սպառվում էր կոոպերացիայի միջոցով և մեծապես նպաստում բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը։ Սակայն 1920-ական թվականների վերջերից կոոպերացիայի արտադրական գործունեությունը աստիճանաբար սահմանափակվեց հիմնականում առևտրով։

Հաշվի առնելով, որ ՆԷՊ-ի կենսագործմամբ առաջնահերթ նշանակություն է ստանում գյուղատնտեսությունը, լայն աշխատանքներ էին տարվում գյուղացիական մանր տնտեսությունների կոոպերացման ուղղությամբ։ Գյուղկոոպերացիան այլևս չէր տեղավորվում սպառկոոպերացիայի շրջանակներում, և դրա առանձնացնելն ու ինքնուրույն գործելու հնարավորություն տալը խիստ անհրաժեշտ էին դարձել։ 1924 թ. օգոստոսին, ՀԽՍՀ Կենտգործկոմը հատուկ դեկրետ ընդունեց այդ մասին։ «Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը, համարելով երկրի գյուղատնտեսության բարգավաճման հիմքը,—գրված է դեկրետում,—Կենտգործկոմը որոշում է. Հայկական ԽՍՀ սահմաններում գյուղատնտեսությամբ կամ նրա հետ կապված արհեստներով զբաղվող բոլոր քաղաքացիներին թույլատրվում է կազմել կոոպերատիվ միություններ»[3]։

Հանրապետության գյուղատնտեսության կոոպերացիայի հարցերը բազմակողմանի քննարկելու նպատակով 1924 թ. սեպտեմբերին Երևանում բացվեց գյուղկոոպերացիայի առաջին համագումարը։ Այնտեղ արդարացիորեն նշվեց, որ մեր սակավահող, ավերված ու քայքայված գյուղատնտեսությունը վերականգնելու և գյուղացիության վիճակը բարելավելու գործում անգնահատելի է կոոպերացիայի դերը։ Նրա ինքնուրույն գործունեությունն ապահովելու նպատակով համագումարն ընդգծեց, որ Հայգյուղկոոպը, առանց միջանկյալ օղակների միջամտության, պետք է զբաղվի գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպման բոլոր հարցերով։ Եթե գյուղատնտեսության կոոպերացումը կարևոր միջոց էր տնտեսությունների ամրապնդման ու զարգացման համար, ապա ժողովրդական տնտեսության վերականգնումն ու աշխատավորության սոցիալական պայմանների բարելավումն իրենց հերթին հիմք դարձան կոոպերացիայի տարբեր ձևերի բուռն ծավալման ու ամրապնդման համար։

Հայգյուղկոոպի ստեղծումը կարևոր դեր խաղաց կոոպերացիայի ցիրուցան միավորների համախմբման, նրանց մեջ ավելի շատ գյուղացիներ ընդ-

1 Խորհրդային Հայաստան, 3. VII. 1928։

2 Խորհրդային Հայաստան, 24. IX. 1925։

3 ՀԽՍՀ կառավարության հրահանգներ և որոշումներ, Երևան, 1924, № 11, էջ 43։

գրկելու, ինչպես նաև անհրաժեշտ մեքենաներ ու գյուղգործիքներ ձեռք բերելու գործում։ Այդ շրջանում գյուղացին նոր էր բռնել ինքնուրույն տնտեսություն վարելու ուղին, և կոոպերացումը հիմնականում տարվում էր ըստ արտադրության տեսակների։ Այն ավելի մատչելի էր գյուղացիությանը և նպատակահարմար՝ տվյալ ճյուղի արտադրությունը բարելավելու տեսակետից։ 1928 թ. հանրապետությունում կազմակերպվել էին 95 կաթնարտել, 25 այգեգործական, 17 մեքենաօգտագործման, 32 հողօգտագործական, 41 գյուղվարկային և բազմաթիվ այլ կոոպերատիվ ընկերություններ[4]։ Գյուղատնտեսական մթերքների արտադրությունից բացի, գրանք զբաղվում էին նաև մթերման և վերամշակման աշխատանքներով։

Չնայած գյուղատնտեսական կոոպերացիան իր գործունեությամբ և օրինակի ուժով բավականին գրական ազդեցություն էր թողնում շրջապատի վրա, այդուհանդերձ, գյուղացիությունը չէր շտապում նրա շարքերում ընդգրկվել։ Հասկանալի է, որ դարերի ընթացքում ձևավորված մասնատիրական հոգեբանությունը հարկադրում էր չշտապել, մեկ անգամ ևս համոզվել կոոպերացիայի առավելության մեջ։ Դա կոոպերացիայի ծավալման բնականոն ընթացքից էր բխում. նրա հիմքում դրված էր կամավորության սկզբունքը։ Անընդհատ կողոպտված և տնտեսապես քայքայված հայ գյուղացու հոգում հույսը միայն իր վրա գնելու գաղափարը շատ խորն էր նստած։ Այդ էր պատճառը, որ նույնիսկ ամենափոքր անհաջողության դեպքում նա շտապում էր դուրս գալ կոոպերացիայից և իր կարիքները հոգալ սեփական միջոցներով։ Չնայած գյուղացիության որոշ մասի կասկածամտությանը, տարեցտարի ավելանում էր գյուղատնտեսական կոոպերատիվների ամբողջ ձևերում ընդգրկվածների քանակը։ Եթե 1924 թ. գյուղկոոպում մոտ 9 հազար մարդ էր ընդգրկված, ապա 1928 թ. այդ թիվն անցել էր 61 հազարից կամ գյուղացիական տնտեսությունների 9,5 %-ից հասել 39,5 %-ի[5]։ Հետաքրքրքրական է, որ արտադրության ճյուղային կոոպերացումը բավական բարձր տեսակարար կշիռ ուներ ծխախոտագործության, շերամապահության, մեղվաբուծության բնագավառներում։ Գերիշխողը կոոպերացիայի պարզագույն ձևերն էին, որոնք համապատասխանում էին գյուղացիների պահանջներին։ Դրանք լայնորեն տարածված էին հատկապես լեռնային շրջաններում։ Քաղաքամերձ գոտում, որտեղ ապրանքային արտադրությունը որոշակի հաջողություններ ուներ, կոոպերացիայի ավելի բարձր կազմակերպված ձևերն էին արմատավորվում (ընդհուպ մինչև արտադրական կոոպերացիաներ)։

Գյուղատնտեսական կոոպերացիան 1920-ական թվականների վերջերին զբաղվում էր նաև գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ։ 1926—1927 թթ. նրա իրավասության տակ գործում էին 58 պանրագործարաններ, Երևանի և Մեղրու պահածոների գործարանները, Ղափանի մետաքսագործարանը, օղու 7 գործարաններ և այլն[6]։ Սակայն վերադաս մարմիններն անընդհատ փորձում էին գյուղատնտեսական կոոպերացիայի պարզագույն և բավական արդյունավետ ձևերը վերածել արտադրական կոոպերատիվների, որի համար այդ ժամանակ օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններ չկային։ Ըստ երևույթին, ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում կոոպերացիայի տարբեր ձևերը, ինչպես նաև մանրարտադրողները չէին սպառել իրենց հնարավորությունները և դեռ երկար ժամանակ կարող էին նպաստել տնտեսական զարգացմանը։ Սակայն այդ բնականոն ընթացքը շուտով խաթարվեց, ինչպես ամբողջ տնտեսական քաղաքականությունը, այնպես էլ կոոպերացիան քաղաքական խաղերի գործիք դարձան։ Գյուղացիությանը կոլտնտեսություններում հարկադրաբար միավորելու նպատակով վերադաս մարմին-

---

4 Հայաստանի գյուղկոոպի հաշվետվություն, Երևան, 1928, էջ 9։

5 Հայաստանի Հանրապետության Նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 198, գ. 80, թ. 37։

6 Նույն տեղում, ֆ. 1, գ. 63, ց. 19, թ. 1։

ները համապատասխան որոշումներով սահմանափակեցին կոոպերացիայի գործունեությունը։ Համատարած կոլեկտիվացումը ծանր հանցանք էր գյուղացիության նկատմամբ։ Այն փաստորեն վերացրեց ինչպես ՆԷՊ-ը, որը մրցության լայն ասպարեզ էր բացել տնտեսության մեջ, այնպես էլ կոոպերացիան, որի շահավետ գործունեությունը հետագա զարգացում չունեցավ։

Սպառողական և գյուղատնտեսական կոոպերացիայի հետ մեկտեղ ՆԷՊ-ի կենսագործման պայմաններում կարևոր նշանակություն ձեռք բերեց նաև արհեստագործական կոոպերացիան, որը լայնորեն տարածվեց թե՛ քաղաքներում և թե՛ գյուղական վայրերում։ Անշուշտ, դա պայմանավորված էր առաջին հերթին արդյունաբերության զարգացման ցածր մակարդակով։ Բացի այդ, ՆԷՊ-ի պայմաններում խոշոր արտոնություններ սահմանվեցին արհեստագործության զարգացման համար, հատկապես խրախուսվեց արհեստագործական կոոպերացիան։ 1924 թ. Հայաստանում գործում էին 846 մանր արհեստագործական ձեռնարկություններ, որոնցից 594-ը՝ գյուղական վայրերում[7]։ Դրանք հիմնականում տեղական հումքը վերամշակող և բնակչության լայն խավերի պահանջմունքները բավարարող ձեռնարկություններ էին։ Հանրապետությունում առավելապես տարածված էին բրուտագործությունը, բամբակի և բրդի մշակումը, կաշեգործությունը, փայտամշակությունը, մետաղամշակությունը և այլն։ Բրուտագործությամբ զբաղվում էին Գյումրիի, Դիլիջանի, Լոռի-Փամբակի գավառներում։ Այդ արհեստի խոշոր կենտրոն էր Արտաշատի Յուվա գյուղը։ Բամբակի և բրդի մշակումը տարածված էր Լոռի-Փամբակի, Զանգեզուրի, Դարալագյազի, Նոր-Բայազետի գավառներում։ Երևանում աշխատում էին 70 արհեստանոց և 2 արտել։ Փայտամշակման արհեստագործությունը, բնականաբար, տարածված էր հանրապետության հյուսիս-արևելյան անտառապատ գոտում։ Հիմնական կենտրոնը Դիլիջանի գավառն էր։ Ամբողջ հանրապետությունում տարածված էր կաշեգործությունը։ Հիմնականում մշակվում էր տեղական հումքը։ 1925 թ. 350 կաշեգործական արհեստանոց կար։ Առավելապես պետական կարիքների բավարարմամբ էին զբաղված մետաղագործական արհեստանոցները, որոնց թիվը 1925 թ. հասնում էր 380-ի։ Կային նաև ոսկերչական ընկերություններ («Վան», «Վասպուրական»)։

Արհեստագործական կոոպերացիան բավական դժվարություններ էր կրում ինչպես հումքի ձեռքբերման, այնպես էլ արտադրանքի իրացման խնդրում։ Շուտով այդ հարցերի լուծումը դրվեց Հայտնարկոոպի վրա, որի ենթակայության տակ եղած բոլոր արհեստանոցներն ու արտելները սկսեցին աշխատել բարձր շահույթով։ Դա նպաստեց այդ կոոպերացիաների ամրապնդմանն ու արագ ընդլայնմանը։ 1928 թ. Հայտնարկոոպի ձեռնարկություններում աշխատում էին մոտ 750 մարդ, իսկ 1929 թ.՝ 6000-ից ավել[8]։ Ի տարբերություն մյուս հանրապետությունների, Հայաստանի արհեստագործական արդյունաբերությունը հիմնականում տարածված էր գյուղական վայրերում, որը և տալիս էր արտադրանքի հիմնական մասը։ Դրա պատճառը հանրապետության սակավահողությունը և հողազինարարական աշխատանքների ձգձգումն էին։ Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ գյուղական վայրերում մեծ թիվ էին կազմում արհեստագործ վարպետները (հատկապես գաղթականության մեջ)։

Հանրապետության արհեստագործական արդյունաբերության զարգացմանը զգալիորեն նպաստեց ժողկոմխորհի՝ 1929 թ. մայիսին ընդունած որոշումը, որով արհեստագործների աշխատանքային ստաժը բանվորական էր համարվում, և նրանք բանվորներին հավասար իրավունքներ էին ձեռք բերում։ Սակայն շուտով արհեստագործական կոոպերացիան զոհաբերվեց ինդուստրացման քաղաքականությանը։

7 Նույն տեղում, ֆ. 1, գ. 69, ց. 19, թ. 1։
8 Խորհրդային Հայաստան, 11. V. 1930։

ՆԷՊ-ի պայմաններում խրախուսվող ապրանքադրամային հարաբերությունները, բնականաբար, պետք է վարկի պահանջ առաջ բերեին։ Հայաստանի հեղկոմը 1920 թ. դեկտեմբերին, ելնելով «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից, հատուկ դեկրետով լուծարել էր վարկային հիմնարկների վերջին մնացորդները։ Սակայն, ՆԷՊ-ին անցնելով, անհնար էր խրախուսել մասնավոր ձեռներեցությունը՝ առանց վարկավորման, առանց պետական օժանդակության։ Իսկ դրա համար, առաջին հերթին, անհրաժեշտ էր ամրապնդել ֆինանսական տնտեսությունը։ 1922 թ. հոկտեմբերին Երևանում բացվեց Հայպետբանկը, որը շուտով իր մասնաճյուղը հիմնեց Գյումրիում։ Մինչև 1924 թ. Հայպետբանկը առևտրի, արդյունաբերության և կոոպերացիայի զարգացումը խրախուսելու համար բաց էր թողել 700 հազար ռ. վարկ, իսկ գյուղատնտեսությանը՝ 600 հազ. ռ.[9]։ 1924 թ. կազմակերպվեց Համամիութենական կենտրոնական պետական բանկը, և հանրապետական բանկերը, այդ թվում և Հայպետբանկը, լուծարվեցին։ Շուտով Հայաստանում կազմակերպվեց գյուղատնտեսական բանկ, որը վարկ էր բաց թողնում չքավոր ու միջակ գյուղացիներին, որպեսզի նրանք չընկնեին վաշխառուների ցանցը։ Այն գյուղկոոպի հիմնական վարկ տվողն էր, նրա զարգացումը խրախուսողը։ Եթե մինչև 1924 թ. գյուղացիությունը վարկ էր ստանում սովի ճիրաններից փրկվելու համար, ապա հետագայում վարկավորումը նպատակաուղղված էր կոլեկտիվ տնտեսությունների ու ընկերությունների ամրապնդմանը։ Այդ նպատակով կազմակերպվեցին մի քանի վարկային ընկերություններ։ Եթե 1924 թ. ապրիլին հանրապետությունում կար 6 վարկային ընկերություն՝ 3,2 հազար անդամով, ապա 1925 թ. հոկտեմբերին՝ 29 ընկերություն, ավելի քան 11,5 հազար անդամով[10]։ Փաստորեն վարկային ընկերություններ էին կազմակերպվել բոլոր գավառներում, շրջաններում։

Ժողովրդական տնտեսությունը վարկավորելու գործում որոշակի դեր էր խաղում նաև Հայաստանի կոմունալ բանկը, որի գործունեությունը նույնպես ծայր էր առնում 1924 թ.՝ Հայպետբանկի լուծարումից հետո։ Նույն թվականին Երևանում բացվեց նաև Համամիութենական կոոպերատիվ բանկի բաժանմունքը, որը հիմնականում վարկավորում էր սպառկոոպերացիային։ Ուշագրավ է, որ 1920-ական թվականների կեսերից բանկերը խուսափում էին մասնավոր անձանց (հատկապես չքավորներին) վարկ բաց թողնելուց, որովհետև մեծ չափերի էին հասնում նրանց պարտքերը նախորդ տարիներից ստացած վարկերի դիմաց, և շատերը չէին կարողանում մարել դրանք։ Այդ է հիմնական պատճառը, որ հետագայում վարկ էր բաց թողնվում միայն կոոպերատիվներին և պետական ձեռնարկություններին։

Վարկային ընկերություններն ու բանկերն անգնահատելի դեր խաղացին ժողովրդական տնտեսության վերականգնման, առևտրի ծավալման գործում։ 1921—1927 թթ. չքավոր ու միջակ գյուղացիությունը մոտ 36 միլիոն ռուբլու վարկ էր ստացել։ Այն մեծապես նպաստեց գյուղացու քայքայված տնտեսությունն ամրապնդելուն, գյուղատնտեսական արտադրությունն ավելացնելուն և ընդհանրապես հանրապետության տնտեսական կյանքը նորմալ հունի մեջ դնելուն։

Սակայն 1920-ական թվականների վերջերին ամրապնդվող բյուրոկրատական համակարգը կտրուկ շրջադարձով փոխեց մեր երկրի զարգացման շատ թե քիչ բնականոն ընթացքը, անցավ տնտեսավարության վարչահրամայական մեթոդին, և բնակչությանը պարտադրվեցին արտադրության ու սպասարկման կազմակերպման այն ձևերը, որոնք նպաստում էին ստալինյան սոցիալիզմի կառուցմանը։ Այդ ժամանակ մի կողմ նետվեց ՆԷՊ-ը՝ իր համոզման ու խաղաղ մրցակցության սկզբունքներով, իսկ կոոպերատիվ շարժումը փոխարինվեց գյուղացիության հարկադրական կոլեկտիվացումով։

---

9 Խորհրդային Հայաստանի 5 տարին, Երևան, 1925, էջ 188։

10 Նույն տեղում, էջ 192։

1930 թ. վերացվեցին նաև գյուղբանկը, կոոպերատիվ բանկը և վարկավորման ընկերությունները, նրանց միջոցներն ու ֆունկցիաները կենտրոնացվեցին Պետբանկում, որը և ամբողջ վարկավորման միջոցները տրամադրեց միայն կոլտնտեսությունների կազմակերպմանը։ Կոոպերացիայի մյուս ձևերը երկրորդական պլան մղվեցին։

Այսպիսով, ՆԷՊ-ի պայմաններում խրախուսելով մասնավոր ձեռներեցության և ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը, հատուկ ուշադրություն դարձվեց կոոպերացիային, որի տարբեր ձևերի արմատավորումը կարևոր դեր խաղաց ժողովրդական տնտեսության վերականգնման և բնակչության սոցիալական պայմանների բարելավման գործում։ Սակայն ՆԷՊ-ի կենսագործմամբ վերածնված կոոպերատիվ շարժումը 1920-ական թվականների վերջերին մտավ փակուղի։ Գյուղատնտեսական կոոպերացիայի տարբեր ձևերը փոխարինվեցին համատարած կոլեկտիվացման մրցավազքով, արդյունաբերական կոոպերացիան քայքայվեց՝ չդիմանալով ինդուստրացման քաղաքականությանը, իսկ սպառողական կոոպերացիան, կորցնելով ինքնուրույնությունը, դարձավ պետական ապարատի կցորդ։ Երկիրը թևակոխում էր ստալինյան սոցիալիզմի կառուցման ծանր և հոգեմաշ փուլը։

НЭП И КООПЕРАЦИЯ

С. А. АРАКЕЛЯН

Резюме

В Армении первые кооперативы появились в начале XX в. Однако с переходом к нэпу кооперативное движение вступило в новую фазу. Государство использовало его как в борьбе с «мелкобуржуазной стихией», так и для организации производства и торговли. В Армении имелись все условия для всестороннего расширения кооперативной сети (сырье, кадры, традиции и т. д.). В 20-х годах оно сыграло огромную роль в восстановлении народного хозяйства и повышении благосостояния трудящихся.